ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հուլիսի 6-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 պայմանագրում 2019 թվականի հուլիսի 9-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառու կազմակերպության գրություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրի 18.01.2019թ. կնքված N 4 համաձայնագրով նախատեսված օրացուցային գրաֆիկի փոփոխություն:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 8.4 կետ:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 6
06.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի

ք. Երևան 09 .07.2019 թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բազալտշին>> ԱԿ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս կոոպերատիվի նախագահ Գ. Մարտիրոսյանի, որը գործում է կոոպերատիվի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 06.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 18.01.2019թ. կնքված N 4 համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 1 (մեկ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	**Կապալառու՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Բազալտշին>> ԱԿ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	Գեղարքունիքի մարզ
կառավարական տուն 3	գ. Գեղարքունիք
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Վարդանանց մ/ճ
Հ/Հ 900011012573	Հ/Հ 1150000278680100
ՀՎՀՀ 02565827	ՀՎՀՀ 08400345
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
_____ Ա.Մկրտչյան	_____ Գ. Մարտիրոսյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
06.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի
09 .07.2019թ. կնքված N 6 համաձայնագրի

<<Հավելված N1
06.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի
18.01.2019թ. կնքված N 4 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Լոռու մարզի ք. Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար 2019թ. հատկացված գումարների շրջանակում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

ըստ աշխատանքների ծավալների

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով)	Աշխատանքների կատարման ժամկետը մինչև
1	22 661 700	30.03.2019 թ. ներառյալ
2	131 293 600	30.06.2019 թ. ներառյալ
3	337 587 200	30.09.2019 թ. ներառյալ
4	453 234 000	20.11.2019 թ. ներառյալ

ըստ առանձին աշխատանքների տեսակների

N	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Կատարված աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը
1	Քանդման աշխատանքներ	30.03.2019 թ.
2	Քանդման աշխատանքներ, ուժեղացման աշխատանքներ, վերակառուցման տեխնիկական միջոցառումներ	30.06.2019 թ.
3	Ուժեղացման աշխատանքներ, ներքին հաղորդակցուղիներ (ջրամատակարարում, կոյուղի,էլմատակարարում,գազամատակարարում, ջեռուցում, հակահրդեհային համակարգ, տեսահսկում, կաթսայատուն և սարքավորումներ), ներքին հարդարում	30.09.2019 թ.
4	Ներքին հարդարում, արտաքին հաղորդակցուղիներ, տարածքի բարեկարգում	20.11.2019 թ.

>>:

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախօրոք անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:**

Պատվիրատու՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011012573
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար
_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ.

Կապալառու՝
<<Բազալտշին>> ԱԿ
Գեղարքունիքի մարզ
գ. Գեղարքունիք
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Վարդանանց մ/ճ
Հ/Հ 1150000278680100
ՀՎՀՀ 08400345
Նախագահ՝
_____ Գ. Մարտիրոսյան
(ստորագրություն) Կ.Տ.